ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>>

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ **Գեղագիտական դաստիարակության առանձնահատկությունները տարրական դպրոցում**

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ..... Հարոյան Էմմա Արսենի

ՂԵԿԱՎԱՐ՝ .....Շողիկ Հրաչի Սարգսյան մ.գ.թ., դոցենտ
Անուն, ազգանուն, գիտ. կոչում, աստիճան

Գյումրի - 2023

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Թեմայի անվանումը՝

«Գեղագիտական դաստիարակության առանձնահատկությունները տարրական դպրոցում»

Թեմայի արդիականությունը պայմանավորված է գեղարվեստական կրթության առանձնահատկությունների ուսումնասիրման անհրաժեշտությամբ, որը տարրական դպրոցում առավել կարևոր և հրատապ նշանակություն է ստանում: Հանրակրթական դպրոցներում գեղագիտական դաստիարակությունը և գեղարվեստական կարողությունների ձևավորումը աճող սերնդի ուսուցման և դաստիարակության համալիր գործընթացի կարևորագույն տարր է:

Ավարտական աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքը ներկայացված է 40 էջ համակարգչային շարվածքով:

Առաջին գլխում ուսումնասիրել ենք <<Դաստիարակության համակարգի բաղադրատարրերը և դրանց դերը կրտսեր դպրոցականի զարգացման գործում>>, անդրադարձել ենք տարրական դպրոցում դաստիարակության համակարգին և գեղարվեստա-գեղագիտական դաստիարակության էությանը:

Երկրորդ գլխում վերլուծել ենք <<Տարրական դպրոցում գեղարվեստական կրթության բովանդակությունը>>, վերլուծել ենք գեղարվեստական կրթության նպատակը, ուղիներն ու միջոցները տարրական դպրոցում և կատարել ենք սոցիոլոգիական հարցման վերլուծություններ և ամփոփումներ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……4

ԳԼՈՒԽ I

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՂԱԴՐԱՏԱՐՐԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1.1 Դաստիարակության համակարգը տարրական դպրոցում……..…6

1.2 Գեղարվեստա-գեղագիտական դաստիարակության էությունը տարրական դպրոցում……....12

ԳԼՈՒԽ II

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

2.1 Գեղարվեստական կրթության նպատակը, ուղիներն ու միջոցները տարրական դպրոցում…….…..…..23

2.2 Գեղագիտական դաստիարակության էությունը տարրական դասարաններում ...27

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……..…….…32

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……...……..…34

ՀԱՎԵԼՎԱԾ.....36

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը պայմանավորված է գեղարվեստական կրթության առանձնահատկությունների ուսումնասիրման անհրաժեշտությամբ, որը տարրական դպրոցում առավել կարևոր և հրատապ նշանակություն է ստանում: Հանրակրթական դպրոցներում գեղագիտական դաստիարակությունը և գեղարվեստական կարողությունների ձևավորումը աճող սերնդի ուսուցման և դաստիարակության համալիր գործընթացի կարևորագույն տարր է:

Գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության միջոցով ապահովվում է անձի մտավոր և ստեղծագործական կարողությունների բացահայտմանն ու զարգացմանն ուղղված շարունակական գործընթացն, որն իրականացվում է միջառարկայական կապերի ակտիվ ներգրավմամբ՝ արվեստի տարբեր տեսակներին հաղորդակցվելու, ինքնուրույն գեղարվեստական-ստեղծագործական գործունեություն ծավալելու միջոցով:

Կրտսեր դպրոցական տարիքի երեխաներն ունեն գեղարվեստա-գեղագիտական զարգացման մեծ հնարավորություններ: Երեխաները, սովորաբար, շատ են հետաքրքրվում նկարչությամբ, ծեփով, երգեցողությամբ, երաժշտությամբ: Այդ գործունեության ճիշտ կազմակերպումը,մի կողմից,նպաստում է նրանց գեղագիտական զգացմունքների զարգացմանը,մյուս կողմից՝ համապատասխան ընդունակությունների բաղադրիչների զարգացմանը: Այդ գործունեության ճիշտ կազմակերպումը, մի կողմից, նպաստում է նրանց գեղագիտական զգացմունքների զարգացմանը, մյուս կողմից՝ համապատասխան ընդունակությունների բաղադրիչների զարգացմանը: Իսկ գեղագիտական դաստիարակությունը նպաստում է կրտսեր դպրոցականների հուզական ոլորտի զարգացմանը և զգայական փորձի հարստացմանը, ակտիվացնում նրա իմացական գործունեությունը և դրդում ստեղծագործության, բացահայտում երեխայի ընդունակությունները և ձևավորում անձնային կարևոր հատկություններ: Գեղագիտական կրթությունը և դաստիարակությունը, ինչպես հայտնի է, երկարատև պրոցես է, այն սկսվում է ընտանիքում, շարունակվում դպրոցում, այնուհետև ամբողջ կյանքում: Այդ շրջանի արդյունավետ և կառավարելի շրջանը դպրոցական տարիներն են:

Ավարտական աշխատանքի **նպատակն** է ուսումնասիրել գեղարվեստական կրթության առանձնահատկությունները և վերլուծել կրտսեր դպրոցականների գեղարվեստական կարողությունների ձևավորման հնարավորությունները տարրական դպրոցում:

Նպատակն իրականացնելու համար առաջադրված **խնդիրներն** են՝

- Ուսումնասիրել դաստիարակության համակարգը տարրական դպրոցում:
- Ուսումնասիրել կրտսեր դպրոցականների գեղարվեստա-գեղագիտական կարողությունների ձևավորման ուղիները տարրական դպրոցում:
- Ուսումնասիրել գեղարվեստական կրթության բովանդակությունը տարրական դպրոցում:
- Վերլուծել «Հրաշք տետր»-ի կիրառման նշանակությունը որպես գեղարվեստական կրթության առանձնահատկություն:
- Սոցոլոգիական հարցումների անցկացում, արդյունքների վերլուծություն:

Աշխատանքի իրականացման համար նախատեսված հետազոտության մեթոդներն են՝ թեմային առնչվող մասնագիտական գիտական գրականության ուսումնասիրություն, վերլուծություն, համեմատում, համադրում, սոցիոլոգիական հարցումներ, հարցազրույց, դիտումներ:

Ավարտական աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլխից, ենթագլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից: Աշխատանքը կազմված է 41 էջ համակարգչային էջից:

ԳԼՈՒԽ I

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՂԱԴՐԱՏԱՐՐԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1.1 Դաստիարակության համակարգը տարրական դպրոցում

Դաստիարակությունը մանկավարժության շատ դժվարին բնագավառներից է: Այն նպատակաուղղված ձևավորման պրոցես է, որն իր վերջնական նպատակն է տեսնում հասարակությանը պիտանի և օգտակար անձի ձևավորումը: Ժամանակակից ընկալմամբ դաստիարակչական պրոցեսը դաստիարակի և դաստիարակվողների արդյունավետ փոխազդեցությունն է, որն ուղղված է դրված նպատակին հասնելուն: Նպատակաուղղված դաստիարակության մեջ կա երաշխիք, որ դաստիարակությունը կհասնի դրված նպատակին և մարդուն կդարձնի այնպիսին ինչպիսին նա պետք է իրեն և հասարակությանը:

Կարելի է ասել՝ դաստիարակությունը նպատակասլաց ներգործությունների ամբողջական համակարգ է, որն ունի մի շարք առանձնահատկություններ:

Դաստիարակության առանձնահատկություններից մեկն էլ նրա ամբողջական բնույթն է, որն նշանակում է՝ դաստիարակվողներին դաստիարակել ոչ թե մեկ ուղղությամբ, այլ դաստիարակության ընդհանուր համակարգի բաղկացուցիչ մասերի բոլոր ուղղություններով. մտավոր, բարոյական, գեղագիտական, ֆիզիկական, իրավական, էկոլոգիական, աշխատանքային:[1]

Դաստիարակության գործընթացն ունի շատ բարդ կառուցվածք: Նրա համակարգի յուրաքանչյուր բաղադրատարր իր հերթին կարող է հանդիսանալ առանձին համակարգ և բովանդակել իրեն հատուկ բաղադրատարր: Այս հատկությունը ժամանակին նկատել են մանկավարժ գիտնականներ Ն. Ի. Բոլդիրև, Մ. Ա. Դանիլովը, Ֆ. Ֆ. Կորոլյովը, Գ. Ի. Շչուկինան, Բ. Տ. Լախաչևը, Ի. Պ. Պաղլասին և ուրիշներ:

[1] Ամիրջանյան Յ.Ա., Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն, Երևան, 2005, էջ 270:

Դաստիարակության բովանդակությունը, իր մեջ ներառում է նրա որևէ բաղադրատարրի ուղղությամբ իրականացվող դաստիարակության համար մեթոդների, հնարների, միջոցների ճիշտ ընտրություն և ենթադրվող արդյունքներ. դաստիարակչական գործընթացի արդյունավետության վրա ազդող պայմաններ և այլն: Ներկայումս աշխարհի շատ երկրներում դաստիարակության բովանդակությունը ներառում է անձի համակողմանի զարգացումը, աշխարհայացքի ձավորումը, մտավոր, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական, իրավական, տնտեսագիտական, էկոլոգիական զարգացման գործընթացները, արտադպրոցական դաստիարակչական աշխատանքների համակարգը:

Դաստիարակության բովանդակությունը, նրա բաղադրամասերը իրականացվում են համապատասխան մեթոդներով, որոնք փոխադարձ կախվածություն ունեն: Դաստիարակության գործընթացում այս կամ այն մեթոդի ընտրությունը և կիրառումը կախում ունեն դաստիարակության բաղադրատարրի /օրինակ՝ բարոյական, մտավոր, գեղագիտական և այլն/ նպատակից, խնդիրներից, տվյալ դեպքում այն բաղադրատարրից, որից իրականացվում է դաստիարակությունը: Ճիշտ չէ միայն մեկ կամ երկու մեթոդով իրականացնել դաստիարակության այս կամ այն բաղադրատարրը: Տվյալ դեպքում որևէ բաղադրատարրից դաստիարակության իրականացումը ենթադրում է մի շարք մեթոդներ:

Կյանքի համար մատաղ սերնդին նախապատրաստելու ամենակարևոր խնդիրներից մեկը երեխաների և դեռահասների մտավոր զարգացումն է: Բայց մանկավարժական տեսության մեջ և դպրոցական պրակտիկայում այդ զարգացումը ամենևին էլ միատեսակ չի լուծվել պատմական տարբեր ժամանակաշրջաններում:[2]

Ընդգծելով դաստիարակության և ուսուցման վիթխարի դերը երեխաների զարգացման, մասնավորապես նրանց մտավոր զարգացման գործում, այնուամենայնիվ չի կարելի դեն նետել նյարդային համակարգի ընդունակությունների ազդեցությունը, որոնց հիման վրա ձևավորվում է մարդու հոգեկանը: Երեխաները ծնվում են ոչ միատեսակ, ունեն տարբեր անատոմիաֆիզիոլոգիական տվյալներ: Սակայն, բացի բնածին արատներից և

[2] Կովայլով Ն.Ե., Մանկավարժության ներածություն, Երևան, 1977, էջ 112:

ծնողներից ժառանգած որոշ հիվանդությունների առանձին դեպքերից, տվյալները վճռական դեր չեն խաղում երեխաների մտավոր զարգացման մեջ, քանի որ ավարտուն հոգեկան հատկություններ չեն, այլ դաստիարակության, սոցիալական միջոցների հետ անձնավորության ակտիվ փոխգործունեության պայմաններում ծառայում են որպես նրանց առաջացման ու զարգացման սոսկ նախադրյալ:[3]

Բարոյական դաստիարակությունը հասարակական գիտակցության ձև է, դաստիարակության ընդհանուր համակրգի ամենակարևոր բաղադրամասերից մեկը: Բարոյական դաստիարակությունը սերտորեն կապված է դաստիարակության մյուս բաղադրամասերի հետ և մեծ դեր է խաղում անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացման հետ: Նրա հիմնական էությունը անձի բարոյական դաստիարակությունն ու բարոյական զարգացումն է:[4]

Անհատի բարոյական գիտակցության մակարդակը որոշում է նրա վարքագիծը և գործունեությունը: Գիտակցության ձևավորման գործընթացը սկսվում է երեխայի դպրոց հաճախելուց շատ առաջ, հասարակության մասին պատկերացումների ձևավորումից, մոտ մարդկանց հետ փոխհարաբերություններից: Դպրոց գալուց պահանջներն աճում են: Առաջին դասարանցիները պետք է սովորեն ընտելանալ, հաշվի նստել ուրիշների հետ, աշխատել մյուսներին չխանգարել: Նախնական պատկերացումների հիման վրա աստիճանաբար ձևավորվում են աճող մարդու կայուն հայացքներն ու համոզմունքները, որոնք ուղղորդում են նրա վարքագիծը:

Նախնական պատկերացումների հիման վրա աստիճանաբար ձևավորվում են աճող մարդու կայուն հայացքներն ու համոզմունքները, որոնք ուղղորդում են նրա վարքագիծը: Որոշակի նորմերի բացատրումից բացի, անհրաժեշտ է ստեղծել պայմաններ, որոնցում երեխաները հնարավորություն կունենան ստուգելու իրենց հայացքներն և համոզվելու դրանց ճշմարտացիության մեջ: Կարևոր է, որ դպրոցականը գիտակցի, ընդունի այն համոզմունքները, միայն այդ դեպքում դրանք կդառնան նրա վարքագծի եղանակ: Բարոյական դաստիարակությունը իրենից ներկայցնում է բարոյական համոզմունքների նպատակաուղղված ձևավորում, բարոյական զգացմունքների զարգացում և հասարակության մեջ մարդու վարքագծի

[3] Կովայլով Ն.Ե., Մանկավարժության ներածություն, Երևան, 1977, էջ 116:
[4] Ամիրջանյան Յ.Ա., Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն, Երևան, 2005, էջ 357:

սովորույթների մշակում: Դաստիարակության ընդհանուր համակարգում բարոյական դաստիարակությունը ունի առաջնային նշանակություն:

Կրտսեր տարիքում բարոյական զարգացման առանցք կամ հիմք կարող են հանդիսանալ այն նորմերը, որոնք համամարդկային արժույթներ են: Կրտսեր տարիքում բարոյական զարգացման հիմքը երեխաների մեջ հումանիստական հարաբերությունների ու փոխհարաբերությունների ձևավորումն է: Հետևապես, տարրական դասարաններում դասվարի խնդիրը այդ պետք է լինի: Հենց այդ տարիքում է, որ երեխան պետք է ըմբռնի, որ ինքը չի կարող ապրել միայնակ, հասարակությունից, մարդկանցից կտրված: Մարդկանց հետ հաղորդակցումը, շփումը, փոխհարաբերությունները դեպի մարդասիրությունը /հումանիզմը/ տանող ճանապարհներն են:[5]

Աշխատանքային դաստիարակությունը դաստիարակության ընդհանուր համակարգի բաղադրատարրերից մեկն է, որը նպաստում է աճող սերնդի համակողմանի ու ներդաշնակ զարգացման հիմնախնդրի լուծմանը: Այն գտնվում դաստիարակության բովանդակության հետ սերտ կապի մեջ:

Դպրոցականի մոտ աշխատանքի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը միաժամանակ առաջատար բարոյական որակների դաստիարակում է և աշխարհայացքի մշակում: Աշխատանքի ընթացքում և նրա միջոցով է մարդը դաստիարակվում, կոփվում, ձեռք է բերում բարոյական բարձր հատկանիշներ: Կ. Դ. Ուշինսկին ասում էր. «Միայն աշխատանքի ներքին, հոգեկան կենարար ուժն է իբրև աղբյուր ծառայում մարդկային արժանապատվության, դրա հետ միասին նրա բարոյականության ու երջանկության համար»: Աշխատանքի առաջին մղիչը համառությունն է:

Աշխատելն իր համար սովորույթ դարձրած մարդը չի կարող հրաժարվել այն մեծ բավականությունից, որ պատճառում է նրան աշխատանքը:Առանց աշխատանքային դաստիարակության մարդը չի կարող գնահատել աշխատանքի գինը: Հասարակության զարգացման, պետության կայացման գլխավոր հիմքը եղել ու մնում է աշխատանքը: Մարդու երջանկությունը առաջին հերթին պայմանավորված է աշխատանքով:

[5] Ամիրջանյան Յ.Ա., Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն, Երևան, 2005, էջ 362:

Ֆիզիկական դաստիարակությունը նույնպես դաստիարակության համակարգի բաղկացուցիչ մասերից է և մեծ նշանակություն ունի անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացման համար: Աճող սերնդի առողջությունը պայմանավորված է ֆիզիկական դաստիարակությամբ:

Ֆիզիկական դաստիարակության նպատակն է հասարակությանը տալ առողջ սերունդ, ապահովել նրա ֆիզիկական և հոգևոր ուժերի ներդաշնակ զարգացումը:

Կրտսեր դպրոցականի զարգացման գործում կարևոր նշանակություն ունի նաև էկոլոգիական դաստիարակությունը: Էկոլոգիական դաստիարակություն հիմքում ընկած է բնությունը, նրա հավասարակշռության պահպանությունը: Շրջակա միջավայրի պահպանությանը իրենց գործուն մասնակցությունը պիտի ունենան ընտանիքը, դպրոցը, ողջ հասարակությունը: Այս գործում մեծ է հատկապես դպրոցի դերը, քանի որ այստեղ է իրագործվում կազմակերպված, պլանավորված դաստիարակությունը:

«Մարդու էկոլոգիական կուլտուրան նրա՝ բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի պատասխանատվությունն է»:

Մշտապես պետք է իմանալ, որ անձի համակողմանի և ներդաշնակ զարգացումը ենթադրում է աճող սերնդի մտավոր, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական, իրավական, տնտեսագիտական, էկոլոգիական դաստիարակություն: Որպեսզի անձը նշված ուղղություններով ունենա և զարգացածություն, և դաստիարակվածություն, կարևոր է, որ այդ երկուսը ներդաշնակված լինեն մարդու անձի մեջ: Ահա սա է առաջատար նպատակը: Այդ են հաստատում աշխարհի առաջադեմ մանկավարժները, հոգեբանները, սոցիոլոգները, փիլիսոփաները, ընդհանրապես բոլոր մեծ մտածողները: Ահա թե ինչու այդ հիմնահարցը լուծելու համար մանկավարժական գիտության առջև դրվեց դաստիարակության նկատմամբ զուգակցված, համալիր մոտեցման խնդիր:[6]

Դեռևս 19-րդ դարի վերջին հայ հանճարեղ մանկավարժ Ղ. Աղայանը «Խորհրդածություն դաստիարակության վերա» հոդվածում անդրադարձել է «անձնավորության համակողմանի և ներդաշնակ զարգացում» հասկացությանը: Ղ. Աղայանը հստակորեն ձևակերպեց մարդու համակողմանի զարգացման իդեալը.

[6] Ամիրջանյան Յ.Ա., Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն, Երևան, 2005, էջ 178:

Մարդուն դարձնել ուժեղ, խելացի և առաքինի, այսինք՝ տալ նրան մտավոր, ֆիզիկական և բարոյական դաստիարակություն:

«Դաստիարակության միակ նպատակը պիտի լինի զարգացնել մարդու այդ երեք կողմը միասին, որպեսզի նա լինի ուժեղ, խելացի և առաքինի: Ոչ մի մարդու դաստիարակության կերպ պիտի չշեղի այս բնական ճանապարհից միայն նրա համար, թե այս կամ այն կոչումը պիտի ստանա, վասնզի մարդը նախ և առաջ մարդ է, և ապա Կիրակոս կամ Մարկոս»:[7]

Հոգեբանական հետազոտությունները ցույց են տալիս, որ կրտսեր դպրոցականների դաստիարակության գլխավոր խնդիրները լուծվում են մանկության տարիքում, հատկապես տարրական դասարաններում: Տարրական դասարաններում ձևավորվում է դպրոցականների ուսումնասիրությունը(обучаемость):[8]

Երեխաների արժեքների ձևավորման վրա մեծ ազդեցություն ունի գեղագիտական դաստիարակությունը: Գեղեցիկի և բարու փոխհարաբերությունները և համապատասխան արժեքների ձևավորման խնդիրները եղել են բոլոր ժամանակների հետազոտողների ուշադրության կենտրոնում: Որոշ հետազոտողներ հակված են գեղագիտական դաստիարակությունը ներառել բարոյական դաստիարակության մեջ: Հայտնվում է նաև տեսակետ, ըստ որի գեղեցիկը ծառայում է որպես բարոյական դաստիարակվածության մակարդակ: Գեղագիտական դաստիարակության շնորհիվ հնարավոր է դառնում նաև անձի հոգևոր աշխարհի գեղագիտական, բարոյական և ինտելեկտուալ բաղադրիչների միջև լիակատար ներդաշնակության հաստատումը:[9]

Համակողմանի ու ներդաշնակ զարգացած մարդ կարող է համարվել նա, ով ունի նաև գեղագիտական դաստիարակվածություն, կրթվածություն: Գեղեցիկին հաղորդակից լինելով, մարդը հանգիստ է գտնում: Արվեստը օգնում է նրան պայքարել, հաղթել, ցանկացած գործունեության մեջ ոգևորող սկիզբ ներդնել: Գեղագիտական դաստիարակությունը դաստիարակողի ու դաստիարակվողի համատեղ գործունեության գործընթաց է, իսկ գեղարվեստական

---

[7] Աղայան Ղ., Խորհրդածություն դաստիարակության վերաբերյալ, «Հայ մանկավարժներ», հ.1, Երևան 1958, էջ 352:

[8] Ананьев Б.Г., Избранные психологические труды, в 2-х т.2, “Педагогика”, 1980 с. 12.

[9] Թեմուրյան Ա., Ղալաչյան Ժ., Ժամանակակից դեռահասի բարոյական արժեքների ձևավորումը, <<Մխիթար Գոշ>>, Գիտամեթոդական հանդես, 2.2020, էջ 203:

դաստիարակությունն կազմում է գեղագիտական դաստիարակության կարևորագույն մասն միայն:[10]

Հաջորդիվ կանդրադառնանք գեղարվեստական կրթությանն, հասկանալու համար, թե ինչ կապ կա գեղագիտական դաստիարակության և գեղարվեստական կրթության միջև:

1.2 Գեղարվեստա-գեղագիտական դաստիարակության էությունը տարրական դպրոցում

Դպրոցն արտացոլում է հասարակության բոլոր հակասությունները, որոնցից ամենաարդիականն ու ամենավտանգավորը հոգևոր ճգնաժամն է: Այն, ինչը մենք անվանում ենք հոգևոր կյանք՝ ներաշխարհի հարստություն, գտնվում է գեղագիտական համակարգի առարկաների ոլորտում. Դրանք առավելագույնս բացահայտում են մարդու և նրան շրջապատող աշխարհի գեղեցկությունն ու ներդաշնակությունը, զարգացնում են ճաշակը: Գեղագիտական դաստիարակությունն անձի մտավոր և հոգևոր ներուժի բացահայտմանն ու զարգացմանն ուղղված շարունակական գործընթաց է, որն իրականացվում է արվեստի տարբեր տեսակներին հաղորդակցվելու և ինքնուրույն գեղարվեստական գործունեություն ծավալելու միջոցով:

Գեղագիտական դաստիարակությունն իրականության նկատմամբ գեղագիտական վերաբերմունքի ձևավորման նպատակաուղղված գործընթաց է: Իրականության նկատմամբ գեղագիտական վերաբերմունքը հասարակական նշանակալի գործունեության հատուկ ձև է, որն իրականացվում է սուբյեկտի (հասարակություն և նրա մասնագիտացված հաստատություններ) կողմից օբյեկտի (անձ, խումբ, աշխատակազմ, հանրույթ) նկատմամբ վերջինիս մոտ գեղագիտական և գեղարվեստական արժեքների աշխարհում կողմնորոշվելու համակարգի մշակման նպատակով՝ տվյալ հասարակության մեջ դրանց բնույթի և նշանակության մասին ձևավորված պատկերացումներին համապատասխան:

Ընկալման գործընթացում տեղի է ունենում անձի հաղորդակցություն

[10] Աթայան Ռ.,Աշակերտների գեղագիտական դաստիարակությունը, Երևան1974, էջ 5:

արժեքների հետ, ներառականության ճանապարհով դրանց վերարտադրում ներքին հոգևոր բովանդակության: Այս հիմքով ձևավորվում և զարգանում է մարդու՝ գեղագիտական ընկալման և ապրումի ընդունակությունը, նրա գեղագիտական ճաշակը և պատկերացումը կատարելակերպի մասին: Գեղեցիկով և գեղեցիկի միջոցով դաստիարակությունը ձևավորում են ոչ միայն անձի գեղագիտաարժեքային կողմնորոշումը, այլև զարգացնում ստեղծագործելու, աշխատանքային գործունեության մեջ, կենցաղում, արարքներում և վարքի մեջ, ինչպես նաև արվեստում գեղագիտական արժեքներ ստեղծելու ընդունակությունը: Գեղեցիկը կյանքում գեղագիտական դաստիարակության և՛ միջոցն է, և՛ արդյունքը: Այն խտացած է արվեստում, գեղարվեստական գրականության մեջ, անխզելիորեն կապված է բնությանը, հասարակական և աշխատանքային գործունեությանը, մարդկանց կենցաղին, նրանց փոխհարաբերություններում գեղագիտական դաստիարակության համակարգն ամբողջությամբ օգտագործում է իրականության գեղագիտական բոլոր երևույթները:[11]

Գեղագիտական դաստիարակությունն ուղղված է մարդու մեջ կյանքի նկատմամբ ստեղծագործ վերաբերմունք արթնացնելու, ազգային և համամարդկային հոգևոր արժեքների նկատմամբ հարգանք ձևավորելու, իդեալներ, բարոյական կողմնորոշիչներ ստեղծելու խնդրին: Սակայն այս ձևակերպումն ուղղակի հայտարարագիր կմնա և չի իրագործվի, եթե գեղարվեստական համակարգի առարկաները, արվեստը դպրոցում իրենց վայել ու արժանվույն տեղը չզբաղեցնեն: Գեղարվեստական կրթության մասսայական պրակտիկան միտված է արվեստի մասնակի գիտելիքներ կամ արհեստավորական որոշ հմտություններ սովորեցնելուն: Գաղտնիք չէ, որ այդ դասերին սովորողները հիմնականում գործնական աշխատանքներ են կատարում՝ ապահովվելով ուսուցման միայն գործնական կողմը: Իհարկե կան մանկավարժները, որոնք ջանում են ամբողջացնեն ուսուցումը՝ հաղորդելով նաև տեսական գիտելիքներ: Փաստորեն անձի ձևավորման ամենակարևոր և պատասխանատու փուլում արվեստի բարերար ազդեցությունը կտրուկ նվազում է, և այդ բացը պետք է լրացնել:

[11] Հարությունյան Ա., Գեղարվեստական դաստիարակության հիմնախնդրի պատմական զարգացման փուլերը, <<Մանկավարժություն>>, ամսագիր, 2.2017, էջ 28:

Գիտնականներն միակարծիք են, որ գեղարվեստական կրթությունը ներառում է երկու փոխկապակցված ոլորտներ: Մի կողմից, սա արվեստի պատմության ուսումնասիրությունն է, որը թույլ է տալիս խորանալ մարդկային համընդհանուր հոգևոր փորձի ոլորտում: Մյուս կողմից, դա արհեստի հիմունքները սովորելն է՝ օգնելով ներգրավվել ստեղծագործության մեջ և ձեռք բերել հատուկ հուզական փորձ: Մարդու գործունեության հաջողությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ մարդը գեղարվեստորեն զարգանալու հնարավորություն ունի: Միևնույն ժամանակ, ձևավորվում է անձի հոգևոր մշակույթը, սկսում են զարգանալ նրա ստեղծագործական ունակությունները, ստեղծագործական ներուժը: Սա թույլ է տալիս մեկ անգամ ևս շեշտել, որ գեղարվեստական կրթությունն ուղղված է մեզ շրջապատող աշխարհի և այս աշխարհում ընկալման մշակույթի զարգացմանը, օգնում է մարդուն կատարելագործվել և ինքնազարգանալ, սովորեցնում է մեզ ընկալել աշխարհն իր ամբողջ իմաստով՝ բազմազան և բազմագույն:[12]

Գեղարվեստական կրթությունը հատուկ կազմակերպված մանկավարժական գործընթաց է՝ ուղղված երեխայի գեղագիտական զգացմունքների, շրջապատող իրականության հանդեպ գեղագիտական վերաբերմունքի, գեղագիտական գնահատականի ձևավորմանը: Դպրոցականների գեղարվեստական գործունեությունը նպաստում է աշակերտների աշխարհայացքի, բարոյական և գեղագիտական գիտակցության ձևավորմանը՝ իրականության նկատմամբ դրսևորելով գեղագիտական զգացումներ:[13]

Կրտսեր դպրոցականների գեղարվեստական կրթությունը բարդ, բազմակողմանի և բազմաֆունկցիոնալ գործընթաց է, որը համապարփակ և ներդաշնակորեն զարգացած անհատականության զարգացման գործընթացի բաղկացուցիչ մասն է՝ ստեղծագործաբար դրսևորվելով տարբեր ոլորտներում (Ա.Ի. Բուրով, Բ.Տ. Լիխաչև): Ըստ անհատականության կրթության ներքին հոգեբանական տեսության դրույթների, կրտսեր դպրոցական տարիքի երեխաները ունեն

[12] Рахимбаева И.Э. Художественное образование в современном мире и перспективы его развития // Современные проблемы науки и образования. – 2018. – № 4.

[13]Պապիկյան Կ., Գեղարվեստական կրթությունը որպես գեղագիտական դաստիարակության բաղադատարր, <<Մխիթար Գոշ>>, Գիտամեթոդական հանդես, 4-6.2012, էջ 19:

բավականին հարուստ զգայական փորձ, արտահայտված հուզականություն, ուրվագծվում է արվեստի գեղագիտական ընկալման նախահակում:[14]

«Գեղագիտական դաստիարակություն» հասկացությունը շատ ավելի տարողունակ և ընդգրկուն է «գեղարվեստական կրթություն» հասկացությունից, չնայած երբեմն դրանք զբաղեցնում են համանշանակ տեղ: Այս երկու հասկացությունները չեն համընկնում: Գեղագիտական դաստիարակության կարևորագույն մաս է հանդիսանում գեղարվեստական դաստիարակությունը, որում որպես դաստիարակող ներգործության միջոցներ օգտագործվում են արվեստի միջոցները, և որը ձևավորում է հատուկ ընդունակություններ ու զարգացնող ձիրքեր արվեստի որոշակի ձևերում՝ կերպարվեստ, երաժշտություն, երգարվեստ, թատերարվեստ, պարարվեստ, դեկորատիվ կիրառական արվեստ և այլն: Գեղագիտական դաստիարակության նպատակը ոչ միայն արվեստի որևէ տեսակին ծանոթացնելն է, այլև կյանքի նկատմամբ ոչ անտարբեր վերաբերմունք ձևավորելը, երեխային ընդհանուր մշակույթի սուբյեկտ դարձնելը: Այն, ինչ ստեղծվել է բարձր ճաշակով, գեղեցիկի կանոններով, հաճելի և հասկանալի է բոլորին: Արվեստի հետ շփումը հարստացնում է մարդուն: Գեղեցիկը, ներդաշնակը տեսնելու պահանջը վերածվում է այն ստեղծելու ցանկության:[15]

Գեղագիտական դաստիարակությունը դպրոցում սկսվում է տարրական դասարաններում լեզվի, գրական ստեղծագործությունների ուսուցման ընթացքում, ինչպես նաև կերպարվեստի և երաժշտության դասերին: Այս աշխատանքի հիմնական ուղղությունը հանգեցվում է արվեստի տարբեր տեսակների հետ երեխաների գործնական ծանոթության, գեղագիտական ընկալման ուսուցման և պարզագույն գեղագիտական դատողությունների: Նշված խնդրի լուծման գործում մեծ դեր են խաղում հենց ուսուցչի օրինակը և գեղարվեստական պատրաստվածությունը: Նա պետք է տիրապետի գեղեցիկ գրելու, բանաստեղծությունների ու պատմվածքների արտահայտիչ և հուզական ընթերցանության ունակության, կարողանա հմտորեն անցկացնել երաժշտության դասերը, տիրապետի երաժշտության և կերպարվեստի

---

[14] Сергеева Б.В., Петренко Н.А. Эстетическое воспитание младших школьников // Современные наукоемкие технологии. – 2016. – № 12-2. – С. 429:

[15] Պապիկյան Կ., Գեղարվեստական կրթությունը որպես գեղագիտական դաստիարակության բաղադատարր, <<Մխիթար Գոշ>>, Գիտամեթոդական հանդես, 4-6.2012, էջ 20:

հմտություններին: Ուսուցչի գեղարվեստական պատրաստվածությունը և արվեստի տարբեր ձևերի իմացությունը երեխաների մոտ ոչ միայն ծնում են ներքին հակասություն իրենց գեղագիտական զարգացման իրական և անհրաժեշտ աստիճանների միջև, այլև առաջացնում արվեստի հետ շփման պահանջմունք: Կրտսեր դպրոցականների մոտ գեղարվեստական ընկալման դաստիարակման համար էական նշանակություն ունի համեմատության հնարքի կիրառումը գրական ստեղծագործությունների ուսուցման, երաժշտության ունկնդրության և նկարների դիտման ժամանակ, ինչպես նաև այդ ստեղծագործությունների գնահատումը, դրանց արժանիքների ու թերությունների նկատմամբ սեփական վերաբերմունքի արտահայտումը: Այս կամ այն ստեղծագործության մեջ արժանիքներն ու թերությունները բացահայտելուն, դուր եկած նկարի կամ երաժշտության մասին վերաբերմունք արտահայտելուն միտված պարզագույն հարցերի առաջադրումը սրում է նրանց ընկալունակությունը և մղում գնահատային դատողությունների: Կրտսեր դպրոցականների գեղագիտական ընկալման դաստիարակության գործում անհրաժեշտ է լայնորեն կիրառել բանաստեղծությունները, երգերը անգիր սերտելու, լավագույն նկարիչների նկարների վերարտադրությունները ցուցադրելու մեթոդը:

Գեղագիտական պահանջմունքների զարգացման և ամրապնդման դաստիարակչական աշխատանքը, ընկալման ձգտումը շարունակվում և զարգանում են նաև հաջորդող դասարաններում ավելի բարձր աստիճանով: Գեղագիտական պարզագույն պատկերացումներն ու դատողությունները ձևավորվում են արդեն իսկ տարրական դասարաններում, սակայն այս ուղղությամբ հիմնական աշխատանքն իրականացվում է դեռահասների և ավագ դպրոցական տարիքի երեխաների հետ, ովքեր դրա համար անհրաժեշտ ընդունակություններին տիրապետում են արվեստի առավել խորը ընբռնման և գեղեցիկի ապրումին ավելի զարգացած զգացողության:

Կարևոր է տարրական դպրոցում հարստացնել սովորողների պատկերացումները մարդու հույզերի հաղորդման գեղարվեստական միջոցների մասին, որոնք կիրառվում են կերպարվեստի, երաժշտության և գրականության մեջ: Արվեստում իրականության պատկերման գեղարվեստական միջոցների ճանաչողության համակարգում մեծ նշանակություն ունի սովորողների կողմից այնպիսի ըմբռնումների գիտակցումը և յուրացումը, ինչպիսիք են ստեղծագործության

հորինվածքը, գունահամակարգը, նրա բովանդակությունը, պատումը, գեղարվեստական պատկերը, կերպարը, մակդիրը, փոխաբերությունը, համեմատությունը, մինորը և մաժորը երաժշտության մեջ և այլն:[16]

20-րդ դարի վերջին տեղի ունեցած սոցիալ-մշակութային, քաղաքական և տնտեսական փոփոխությունները զգալիորեն ազդեցին հասարակության արժեքային կողմնորոշումների, մատաղ սերնդի դաստիարակության գործընթացի վրա: Ընդհանուր մշակութային ճգնաժամի կարգավորման ուղիներ որոնելու արդյունքում լուծվեց ժողովրդի գեղագիտական իդեալների հիման վրա քաղաքացիների կրթության խնդիրը: Մանկավարժական հետազոտությունների ծրագրերը և կարգավորող փաստաթղթերի վերլուծությունը հիմք է տալիս դիտարկելու գեղարվեստական կրթությունը՝ որպես գեղագիտական դաստիարակության համակարգի կարևոր բաղադրիչ:[17]

Սովորողների գեղարվեստական կրթության ու դաստիարակության խնդիրներն, իրենց բնորոշ առանձնահատկություններով հանդերձ, սերտ կապի մեջ են գեղագիտական դաստիարակության խնդիրների հետ: Գրական մանկավարժական որոշ աղբյուրներում և առօրյա կյանքում երբեմն չեն տարբերակվում «գեղագիտական դաստիարակություն» և «գեղարվեստական դաստիարակություն» հասկացությունները: Հայ մանկավաժները գեղարվեստական դաստիարակությունն դիտարկում են որպես գեղագիտական դաստիարակության բաղադրամաս և իրենց աշխատություններում անդրադարձել են նաև գեղարվեստական կրթության ու դաստիարակության հարցերին: Նկատի ունենք հատկապես Ա.Բալյանի «Դպրոցականների գեղագիտական դաստիարակությունը»(1979) և «Էսթետիկական դաստիարակության տեսություն»(1980), Ա.Բալյանի և Լ.Ներսիսյանի «Գեղագիտական դաստիարակության տեսություն» «Գեղագիտական դաստիարակության սկզբունքները»(1990, ռուս.), Ռ.Աթայանի «Դպրոցականների գեղագիտական դաստիարակությունը»(1974), Յ.Խաչիկյանի «Արվեստի էսթետիկայի հարցերը»(1978), Մ.Մելքումյանի «Էսթետիկայի

[16]Հարությունյան Ա., Գեղարվեստական դաստիարակության հիմնախնդրի պատմական զարգացման փուլերը, <<Մանկավարժություն>>, ամսագիր, 2.2017, էջ 29:

[17]Любимова,Ю.С., Эстетическое воспитание и художественное образование младших школьников / Ю.С.Любимова // Пачатковаяшкола.–2007.–No1.–С.39.

դաստիարակության ընդհանուր խնդիրներն և կենսագործման մի քանի ուղիները»(1961), Լ.Ներսիսյանի «Դպրոցականների գեղագիտական դաստիարակության և գեղարվեստական կրթության համակարգի տեսական հիմնավորումը»/2002/, «Արվեստի փիլիսոփայական ընդհանրությունը»/2003/ և այլ աշխատություններ:

Գեղարվեստական կրթությունն այսօր ակտիվորեն զարգանում է, այն պահանջարկ ունի, քանի որ արվեստը, որի հետ հաղորդակցումը գեղարվեստական կրթության հիմքում է, կրթական մեծ արժեք ունի, և արվեստի լեզուներն ու մեթոդները օգնում են զարգացնել տեղեկատվության հսկայական շերտ, ընդլայնելով դրա բովանդակության հուզական հագեցվածությունը (Ա.Ա.Կրուիլինա, Յու .Մ. Լոտման): Հիմք ընդունելով կրթության և արվեստի առաջադրանքներն ու գործառույթները նման լինելու դրույթը (Լ. Ն. Ստոլովիչ), կարելի է պնդել, որ մարդկային մշակութային գործունեության այս ոլորտների միավորումը կամրապնդի և՛ կրթությունը, և՛ արվեստը:

Այս առումով, կարելի է ասել, որ գոյություն ունի աշխարհը ճանաչելու գիտական և գեղարվեստական ձև: Հետազոտողները նշում են, որ ճանաչողության գիտական ձևը ենթադրում է օբյեկտի բովանդակության ըմբռնում, որի արդյունքն է մարդու կողմից աշխարհի, նրա երևույթների և զարգացման օրինաչափությունների ըմբռնման հետ կապված գիտելիքները: Խոսելով ճանաչողության գեղարվեստական ուղու մասին՝ մենք նկատի ունենք դրա բովանդակությունը՝ ապրելը կամ վերապրելը, որի արդյունքը մարդու նկատմամբ հուզական-արժեքային վերաբերմունքն է աշխարհին:[18]

Չնայած «էսթետիկա» հասկացությունը կիրառությա մեջ է դրվել միայն 18-րդ դարի կեսերին, սակայն մարդկանց գեղարվեստական պրակտիկայի ու գեղեցիկի, գեղարվեստական գործունեության ու գեղագիտական զգացմունքի նկատմամբ նրանց հայացքների ընդհանրացման փորձերը դասերի պատմություն ունեն:[19]

Գեղագիտությունն ուսումնասիրում է գեղագիտական ապրումների և

[18] Рахимбаева И.Э. Художественное образование в современном мире и перспективы его развития // Современные проблемы науки и образования. – 2018. – № 4.

[19]Հարությունյան Ա., Գեղարվեստական դաստիարակության հիմնախնդրի պատմական զարգացման փուլերը, <<Մանկավարժություն>>, ամսագիր, 2.2017, էջ 29:

զգացմունքների ամբողջությունը, մարդու գեղագիտական հարաբերությունն իրականության հետ, ինչպես նաև արվեստը, որպես այդ հարաբերության արտահայտման առավել վառ ձև: Գեղագիտությունն ուսումնասիրում է ինչպես մարդու գեղագիտական զգացմունքները, ճաշակը, իդեալները, այնպես էլ բուն իրականության գեղագիտական կողմերն ու նրանց արտացոլումն արվեստում: Ազգային դպրոցներում ձևավորման ընթացքում մեծ կարևորություն է ստանում ազգային կադրերի պատրաստման խնդիրը, որն էլ պահանջեց, որպեսզի մեծ ուշադրություն դարձվի արվեստի դասավանդման հարցերին:

Գեղարվեստի նկատմամբ արվեստագետների արտահայտած գաղափարները չէին կարող լինել համարժեք, քանզի նրանց շարքերում կային ոչ միայն նկարիչներ, այլև գրողներ, գեղարվեստի քննադատներ, նույնիսկ արվեստի պատմաբաններ, ինչպես օրինակ, Դելակրուան, Ֆրոմանտեն, Մորիսը և այլք:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի գեղարվեստի զգացումն աչքի է ընկնում ոչ միայն տարբեր հոսանքների արագ հերթափոխությամբ, այլև արվեստագետների այնպիսի ձգտումներով, որոնք փորձում են տեսականորեն հիմնավորել իրենց ստեղծագործական պրակտիկան: Գեղագիտական խնդիրների նկատմամբ արվեստի գործիչների չթուլացող հետաքրքրությունը, կյանքի երևույթների նկատմամբ գեղագիտական մոտեցման սկզբունքները հասկանալու և ձևակերպելու նրանց ձգտումն պայմանավորված է նրանով, որ արվեստում իրենց արտացոլումն են գտնում մարդու կողմից իրականության գեղագիտական յուրացման գործընթացները, և գեղարվեստական-պատկերային արտահայտություն է ստանում մարդու գեղագիտական հարաբերությունը աշխարհի նկատմամբ:[20]

Գեղարվեստական կրթությունը կարող է նաև համարվել որպես համակարգ, որը բաղկացած է այնպիսի փոխկապակցված բաղադրիչներից, ինչպիսիք են նպատակը, բովանդակությունը, ձևերը, միջոցները, տեխնոլոգիաները, գործունեության մեթոդները և այլն: Միևնույն ժամանակ, գեղարվեստական կրթության գործառույթին անհնար է մոտենալ ավանդական կրթական համակարգի տեսակետով, երբ յուրաքանչյուր տարր կատարում է որոշակի գործառույթ, և

[20] Հարությունյան Ա., Գեղարվեստական դաստիարակության հիմնախնդրի պատմական զարգացման փուլերը, <<Մանկավարժություն>>, ամսագիր, 2.2017, էջ 34:

ցանկացած փոփոխություն կարող է խանգարել աշխատանքին: Նման համակարգի պայմաններում ստեղծագործական ներուժի իրացումը դառնում է դժվար և սահմանափակ: Ուստի գեղարվեստական կրթությունը պետք է դիտարկել որպես բաց սոցիալական համակարգ, որում շրջակա միջավայրի հետ շփման գործընթացն անընդհատ ընթանում է, և գործունակության և զարգացման արդյունավետությունը որոշվում է դրա բաց լինելու աստիճանից:

Եթե գեղարվեստական կրթությունն ուսումնասիրվում է որակ ապահովող գործընթացի տեսանկյունից, ապա այն կարող է ներկայացվել որպես երկարաժամկետ և անվերջ գործընթաց: Գեղարվեստական կրթությունը, որը դիտվում է որպես գործընթաց, անխուսափելիորեն ունի հետաձգված և միջանկյալ արդյունք: Կասկած չկա, որ առարկայի գեղարվեստական մշակույթի աճը ազդում է հասարակության մշակութային ներուժի ավելացման վրա: Իսկ գեղարվեստական կրթության բուն արդյունքը կախված է մանկավարժական գործընթացից:[21]

Գեղարվեստական կրթության ոլորտում հետազոտությունների վերլուծություն այնպիսի գիտնականների կողմից, ինչպիսիք են Ե.Մ. Ակիշինա, Լ.Լ. Ալեքսեևան, Տ.Ս. Կոմարովա, Լ.Գ. Սավենկովա, Բ.Պ. Յուսովը և մյուսները թույլ են տալիս առանձն ացնել այն ընդհանուրն, որը միավորում է նրանց աշխատանքը: Դրանք արտացոլում են գեղարվեստական մանկավարժության և գեղարվեստական կրթության հնարավորությունների՝ մեր ժամանակի գլոբալ խնդիրները և հակասությունները հաղթահարելու գործում՝ ուսումնասիրելով արվեստի և կրթական գործընթացում գեղարվեստական միջոցների առավել արդյունավետ օգտագործման հնարավորությունները:

Այսպիսով, ժամանակակից պայմաններում գեղարվեստական կրթության արդյունավետ զարգացման համար անհրաժեշտ է համատեղել ուսուցման տեսական և գործնական բաղադրիչները՝ միաժամանակ ամրապնդելով մասնագիտական բաղադրիչը և անհատի ինքնակատարելագործումը: Մի շարք գիտնականներ (Ն. Կ. Բակլանովա, Ա. Գ. Բերմուս, Գ. Վ. Գուտնիկ, Յու. Կ. Իտին, Լ. Վ. Օստրովսկայա և այլն) հնարավոր և նպատակահարմար են համարում օգտագործել տարբեր

[21] Рахимбаева И.Э. Художественное образование в современном мире и перспективы его развития // Современные проблемы науки и образования. – 2018. – № 4.

ժամանակակից տեխնոլոգիաներ մասնագիտական ուսուցման գործընթացում՝ որպես բարձրորակ հիմքերի կրթական ծառայություններ: Որոշ գիտնականներ (Ա.Ս. Աֆանասև, Վ.Ի. Բեզրուկով, Վ.Ա.Կաչալով, Է.Մ. Կորոտկով և ուրիշներ) այս խնդրի լուծումը կապում են համալսարանի և ֆակուլտետների կառավարման համակարգը բարելավելու հետ: Գեղարվեստական կրթության խնդիրների լուծումը և դրանց վերացման ուղիներ գտնելը հնարավորություն տվեցին պարզել դրա զարգացման հիմնական ուղղությունները.

1. պետական մակարդակում գեղարվեստական կրթության նկատմամբ վերաբերմունքի ձևավորում, որպես մարդկային գործունեության հատկապես կարևոր ոլորտ, որը չափազանց անհրաժեշտ է հասարակության զարգացման համար.
2. գեղարվեստական կրթության նպատակների, խնդիրների և բովանդակության վերանայում՝հիմնված ժամանակակից սոցիալ-մշակութային իրավիճակի բնութագրերի վրա.
3. գեղարվեստական և գեղագիտական օբյեկտների դերի ուժեղացում՝ հանրակրթության բոլոր մակարդակներում, ավելացնելով ժամերի քանակը և կրթական ծրագրերի ցանկը.
4. գեղարվեստական կրթության բովանդակության մանկավարժորեն հիմնավորված ընտրություն, ներառյալ ընդհանրացված գիտելիքներ ձեռք բերելու փորձ, ստեղծագործական գործունեության մեթոդներ, հուզական և արժեքային փոխհարաբերություններ.
5. գեղարվեստական կրթության ըմբռնում և կազմակերպում ՝ որպես արժեք, որը ներառում է անձի անձնական արժեքային պատկերացումը շրջապատող աշխարհի, արվեստի և իր ՝ որպես գեղարվեստական և ստեղծագործական արժեքների ստեղծողի գործունեության մեջ.
6. ուսումնական հաստատություններում ազգային ավանդույթների և արվեստին ծանոթանալու այլ ձևերի վերականգնում, պահպանում և զարգացում:
7. գեղարվեստական կրթության ծրագրակազմի և մեթոդաբանական աջակցության, բովանդակության, ձևերի և մեթոդների շարունակական թարմացում՝հաշվի առնելով լավագույն ներքին փորձը և համաշխարհային ձեռքբերումները.

8. տեխնոլոգիաների կատարելագործում, նրանց ուշադրությունը դպրոցականների ստեղծագործական զարգացման, նրանց կարողությունների և ինքնուրույն գործընթացների զարգացման վրա.
9. Ուսուցչական կազմի վերապատրաստման համակարգի զարգացում և ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական բազայի ամրապնդում:[22]

Գեղագիտա-գեղարվեստական դաստիարակության էության մեջ դրսևորվում են երեք կողմեր՝

1.կրտսեր դպրոցականների գեղագիտական ընկալումներն ու ըմբռնումները,

2.գեղագիտական պատկերացումներն ու դատողությունները,

3.գեղագիտական մտածողությունն ու համոզմունքները:

Առանց այդ որակների կրտսեր դպրոցական տարիքի երեխաները չեն կարող արժևորել ու գնահատել արվեստի գործերը, նրանք չեն ունենա գեղագիտական ճաշակ: Ահա այդ է պատճառը, որ դպրոցականները տարբեր ձևով են ընկալում ու զգում գեղեցիկը:[23]

Դպրոցում գեղարվեստական դաստիարակությունը իրականացվում է ըստ սովորողների տարիքային առանձնահատկությունների:

Տարրական դասարաններում նոր դպրոցական իրավիճակը երեխային դրդում է գեղարվեստական գործունեության իմաստավորման և նպատակաուղղվածության: Սակայն նրա հետաքրքրությունները շարունակում են մնալ կոնկրետ, մակերեսային և ցրված: Կրստեր դպրոցականի ուշադրությունն անկայուն է: Նրան հոգնեցնում են երկարատև դիտումները կամ ունկնդրումները: Բացի այդ, նրան առավել հրապուրում է ստեղծագործական բուն ընթացքը և ոչ արդյունքը: Ուստի հարկ է նրան պահել իր հետաքրքրությունների դաշտում:[24]

---

[22]Рахимбаева И.Э., Художественное образование в современном мире и перспективы его развития // Современные проблемы науки и образования. – 2018. – № 4.

[23]Քոչարյան Լ., Գեղագիտական դաստիարակության խնդիրները, Ընտանիք և դպրոց, գիտամեթոդական ամսագիր, 1.2010, էջ 13:

[24] Նույն տեղում, էջ 15:

ԳԼՈՒԽ II

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

2.1 Գեղարվեստական կրթության նպատակը, ուղիներն ու միջոցները տարրական դպրոցում

Ազգային դպրոցի գլխավոր գործառույթն աշակերտի՝ որպես ազատ, ինքնակազմավորվող անձի զարգացման ապահովումն է՝ ազգային մշակույթից մինչև համաշխարհային մշակույթի իմացությունը:

Գեղարվեստական կրթության նպատակը շրջապատող աշխարհի նկատմամբ գեղագիտական վերաբերմունքի, գեղեցիկը նկատելու, ընկալելու ու գնահատելու, գեղագիտական զգացմունքների ձևավորումն է: Եթե սովորողն անընդհատ շփվում է գեղեցիկ իրերի հետ, նրա մեջ ցանկություն է առաջանում ստեղծել նույնպիսի գեղեցիկ իրեր՝ ստեղծված գեղեցկության օրենքներով: Գեղարվեստական կրթության հիմքում ընկած է մանկավարժի և երեխայի համատեղ գործունեությունը, որն ուղղված է գեղարվեստական արժեքներն ընկալելուն, առարկայական միջավայրի նկատմամբ գիտակցական վերաբերմունք ձևավորելուն և ստեղծագործական ունակություններ զարգացնելուն: Այդ գործունեության հաջողությունը մեծապես կախված է նրանից, թե ինչ չափով են հաշվի առնվում սովորողի անհատական առանձնահատկությունները, պահանջմունքներն ու հետաքրքրությունները, ընդհանուր զարգացման մակարդակը: Երեխան միշտ արձագանքում է բնության մեջ, շրջապատող առարկայական աշխարհում գոյություն ունեցող գեղեցիկին, բարուն, լավին: Ընդ որում, մեծ նշանակություն ունեն նաև երեխաների անձնական փորձը, նրանց մղումները, ձգտումները, ապրումները:[25]

Դեռ մանկապարտեզից, ապա տարրական դասարաններից սկսած, այբուբենն ուսուցանելիս և նկարչական տետրում առաջին գծերը քաշելիս ուսուցիչը ստեղծում է նաև իր սաների գեղագիտական ըմբռնումների նախահիմքերը: Հետագայում ուսումն իր բովանդակությամբ ավելի բազմակողմանի հնարավորություններ է ընձեռում

[25] Неменский Б.П., Роль искусстве в системе общего образования: Чему и зачем мы учим, М.,"Начальная школа", 2000, ст.23:

գեղեցիկի զգացողության և գեղագիտական ճիշտ պատկերացումների դաստիարակման համար:

Ըստ Լունաչարսկու, առանց արվեստների հիմունքները գիտենալու անկարելի է կրթված մարդ լինել: Բայց այդ կրթությունը ևս ինքնանպատակ չէ: Նա պետք է բաց անի «հոգու դռները» այն բոլոր վայելքների առջև, որ բերում է մարդուն գեղեցիկը արվեստի մեջ և կյանքը իր գեղեցկություններով:[26]

Գեղարվեստական կրթությունը դպրոցականների գեղագիտական դաստիարակության առաջին աստիճանն է, վերջինս կարելի է իրականացնել դպրոցում, ինչպես նաև արտադասարանային և արտադպրոցական աշխատանքների ընթացքում: Կարևոր նշանակություն կարող է ունենալ արվեստին վերաբերող գրքերի ընթերցումը, արվեստագետների կյանքի ու գործունեության ուսումնասիրությունը, երաժշտության ունկնդրումը, վեպերի, վիպակների, պատմվածքների, պոեմների, բանաստեղծությունների ընթերցումը, ներկայացումների, կինոնկարների դիտումները, դասական երաժշտության հաճախակի ունկնդրումը: Սակայն այս ամենը դեռևս բավարար չէ գեղարվեստական կրթության համար: Աշակերտները լսողի, դիտողի, ունկնդրողի դերում հանդես գալուց բացի, պետք է հանդես գան ստեղծագործողի, արարողի, կերտողի, կատարողի դերում: Այս ամենը, ինչպես նաև երեխաների տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով, փորձառու ուսուցիչը կազմակերպում է երգի, պարի, թատերական, ձեռարվեստի, նկարչության և այլ խմբակներ: Երեխաների գեղարվեստական կրթության կարևոր ուղիներից են բացատրությունը, վերլուծությունը, գեղագիտական խնդիրների լուծումը, վարժությունները, բանավեճը և այլն:[27]

Գեղարվեստական միջոցների համակարգի մեջ են մտնում «Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ» նորմատիվ փաստաթղթով սահմանված ուսումնական բոլոր բնագավառները, խաղը, ուսումնական աշխատանքը, ինքնագործունեությունը, գեղարվեստական գրականութոյւնը, բնությունը, թատերական արվեստը և այլն, որոնցից յուրաքանչյուրը մեծ դեր է խաղում

[26] Աթայան Ռ.,Աշակերտների գեղագիտական դաստիարակությունը, Երևան1974, էջ 46:
[27] Ներսիսյան Լ.Ս., Գեղարվեստական կրթությունը գեղագիտական դաստիարակության սոցիալական հիմք, Գեղարվեստական հիմք, Երևան 2005, էջ 4:

երեխաների գեղագիտական մշակույթի զարգացման համար:[28]

Դպրոցում գեղագիտա-գեղարվեստական միջոցները կամ համակարգը շատ ընդարձակ են: Այդ համակարգի մեջ կարելի է դասել իմացությունը, ուսումնական բոլոր առարկաները, խաղը, ուսումնական աշխատանքը, թատերական արվեստը, գեղարվեստական գրականությունը, բնությունը և այլն: Բոլոր միջոցներն էլ առանձին-առանձին մեծ դեր են խաղում կրտսեր դպրոցականների տարիքի երեխաների գեղագիտական կուլտուրայի զարգացման համար:

Իմացողության առաջին փուլն ընկալումն է, Իմացության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում նաև մտածողությունը: Այն, ինչ երևույթի, առարկայի մեջ տեսնում է մտածող մարդը, չի կարող տեսնել չմտածողը, անգետը: Այստեղից էլ հետևում է, որ յուրաքանչյուր ուսուցիչ պետք է երեխաների մեջ զարգացնի իմացությունը, ակտիվացնի հատկապես մտածողությունը: Առանց այս ամենի իրագործման անհնար է ձևավորել դպրոցականների գեղագիտական մտածողությունը:

Կախված նրանից, թե երեխաներն ինչպես են գեղարվեստական տեղեկատվություն ստանում /արվեստի ստեղծագործությանը ծանոթանում են անմիջականորեն՝ լսելով երաժշտական պիեսը, երգը, հեքիաթը, դիտելով նկարը, կամ ուսուցչի միջոցով, որը պատմում է, բացատրում, հարցեր է տալիս/, գեղարվեստական միջոցները կարելի է բաժանել երկու խմբի՝ դիտողական և խոսքային: Դրանց ներկայացվում են որոշակի պահանջներ, օրինակ՝ գրական, երաժշտական կատարումները պետք է լինեն արտահայտիչ, հուզիչ, խոսքային մեթոդները ևս պետք է պատկերավոր լինեն, որպեսզի երեխաները ոչ միայն «նկարեն» հեքիաթի, երգի բովանդակությունը հասկանան առաջադրանքի իմաստը, այլև կերպարների տրամադրությամբ ապրեն, զգան գեղարվեստական միջոցների արտահայտչականությունը:

Արվեստը միշտ էլ եղել է գեղագիտական դաստիարակության հիմնական աղբյուրն ու միջոցը: Ընդ որում, ինչպես գրում է հայտնի գեղագետ ու արվեստաբան Բ.Մ.Նեմենսկին, չի կարելի կարծել, թե գեղագիտական դաստիարակության իմաստն այն է, որ ձևավորի «գեղարվեստական նուրբ ընկալում, հոգեկան կերտվածքի

[28]Խաչատրյան Ն., Գեղարվեստական կրթության նպատակը, ուղիներն ու միջոցները հանրակրթական դպրոցում, <<Մխիթար Գոշ>>, Գիտամեթոդական հանդես, 4-6.2012, էջ 23:

պաճուճագեղություն և այլ հաճելի բաներ, որոնք պարտադիր չեն բոլորի համար և հարկավոր են միայն ժամանցի և «ազատ ժամանակը կազմակերպելու» համար»:[29]

Գեղագիտական գործունեության միջուկը կազմում է արվեստը: Այստեղ մարդու գործունեությունը ոչ միայն ամբողջովին ներթափանցում է համամարդկային, գեղագիտական բովանդակությամբ, այլև հասնում է գեղագիտականի բարձրագույն ձևին՝ դառնում է գեղարվեստական գործունեություն, որն իր լավագույն դրսևորումներում ստեղծում է մարդկանց համար բոլոր ժամանակներում իրենց նշանակությունը պահպանող անմահ գլուխգործոցներ:

Արվեստը հասարակական գիտակցության ձև է, մարդու ստեղծագործ աշխատանքի և հոգևոր մշակույթի տեսակ, իրականության ճանաչման յուրահատուկ եղանակ: Արվեստը իրականությունն արտացոլում է գեղագիտորեն, գեղարվեստական կերպարների միջոցով: Արվեստի արտացոլման առարկան իրականության գեղագիտական երևույթներն են՝ կյանքի ողբերգական կամ հերոսական, վեհ կամ նսեմ և հատկապես գեղեցիկ կողմերը: Իրականության գեղագիտական ճանաչումը, մարդու գեղարվեստական ստեղծագործությունը իրացվում է արվեստի տարբեր տեսակների միջոցով: Գեղագիտական երևույթները ընկալվում են տեսողությամբ, լսողությամբ, ինչպես նաև սինթեզված (միաժամանակ և՛ լսողությամբ, և՛տեսողությամբ): Դրան համապատասխան արվեստը բաժանվում է՝ նկարչություն, երաժշտություն, կինո և այլ ձևեր: Սակայն արվեստի տարբեր ձևերի միջև սահմանները հարաբերական են, նրանք երբեմն միահյուսվում կամ զուգակցվում են իրար: Իրականության գեղարվեստական արտացոլումն ու ճանաչումը բարերար ներգործություն է ունենում մարդկանց գիտակցության զգացմունքների վրա, որովհետև արվեստում արտահայտվածը հարաբերակցվում է արվեստագետի իդեալի հետ: Արվեստագետի իդեալը իր ժողովրդի, դասակարգի կամ սոցիալական խմբի ձգտումների, իղձերի արտացոլումն է: Պատկերելով իր ժամանակի տգեղ, այլանդակ երևույթները՝ արվեստագետը ժամանակակիցներին ստիպում է այդ երևույթները վերապրել անբարյացակամության զգացումով և ձգտել դեպի գեղեցիկը, վեհը:

Արվեստի ծագման և էության վերաբերյալ կան զանազան տեսություններ: Այն

[29]Неменский Б.М., Мудрость красоты, М., “Просвещение”, 1981, с.28.

համարել են կենսաբանորեն մարդուն տրված «բացարձակ ոգու», «աստվածային հայտնության» արդյունք: Հակադրվելով իդեալիստական նման ըմբռնումներին՝ մարքսիզմը գտնում է, որ արվեստը սոցիալական է և՛ իր ծագմամբ, և՛ իր իր էությամբ:

2.2. Գեղագիտական դաստիարակության էությունը տարրական դասարաններում

Գեղագիտական դաստիարակությունը որոշակի իմաստով իր մեջ ներառում է գեղարվեստական դաստիարակությունը, այսինքն՝ մարդու դաստիարակությունը գեղեցիկի նկատմամբ արվեստի ոլորտում և միջոցներով: Արվեստը որպես գեղարվեստական պրոցես տական փոխազդեցությունների (տարբեր մակարդակների, տեսակների ու տիպերի) զարգացած համակարգ է, որն առաջադիմում է գեղարվեստական մտածողության տիպի բարձրացման կողմը՝ ուղղությունների պատմական հերթափոխման ճանապարհով, ավելի վաղ ստեղծված արժեքների նշանակության պահպանմամբ հանդերձ:

Իսկ ինչպիսին է արվեստի դերը ժամանակակից աշխարհում: Մի ժամանակ Ֆ.Մ.Դոստոևսկին հռչակեց. «Գեղեցկությունը կփրկի աշխարհը»: Սակայն ինչու այն մինչև հիմա չի փրկել նրան: Միթե արվեստի քիչ գլուխգործոցներ կան մարդկության պատմության մեջ: Սվիթը «Գուլիվերի ճանապարհորդության» հրատարակությունից հետո սպասում էր աշխարհի ուղղմանը, չարիքից, անարդարությունից նրա փրկությանը: «Ռևիզորը» չոչնչացրեց ո՛չ կաշառակերներին, ո՛չ բյուրոկրատներին: Շեքսպիրը չփրկեց աշխարհը յագոներից, Պուշկինը՝ սալիերիներից, Մոլիերը՝ մարդատյացներից ու սուր ճգնավորներից: Գ. Ուսպենսկին պատմում էր, թե ինչպես Միլոսյան Վեներան ուղղել է կյանքի կողմից ճնշված, կքված մարդկանցից մեկին: Բայց որքան մարդիկ մնացին կքված, կոտրված նույն այն աշխարհում, որտեղ կա և՛ Միլոսյան Վեներա, և՛ Ռաֆայելի «Սիքստինյան տիրամայրը»:

Հասարակության մեջ շատ ուժեր են գործում, և գեղեցկությունը, արվեստը սոսկ մեկն է դրանցից: Գեղեցկությունն ընդունակ է «փրկելու աշխարհը», բայց այն դեպքում, երբ մյուս ուժերի հասարակականորեն խորտակիչ գործողություններն արմատից չեն ոչնչացնում այն ամենը, ինչ ստեղծում է արվեստը:[30]

Այսպիսով, մարդու զարգացումը, նրա անընդհատ կատարելագործումն ընթանում է հասարակության միջոցով, հանուն անհատի: Անհատի բազմակողմանի զարգացումը, հասարակության հետ, մարդկության հետ նրա ներդաշնակ միավորումն արվեստի բարձրագույն մարդասիրական նպատակն է: Հետևաբար հումանիզմը գեղագիտության ու արվեստի բարձրագույն նպատակն ու իմաստն է:

Գեղագիտական կրթությունը և դաստիարակությունը դպրոցում պետք է իրականացնեն ուսումնական բոլոր առարկաների միջոցով: Անձի դաստիարակությունը և ներդաշնակ զարգացումը դպրոցական կրթության հիմնական նպատակն է, որն անհնար է առանց արվեստի հետ նրա հաղորդակցության: Արվեստի տարբեր բնագավառների ուսումնասիրությունը զարգացնում է երեխայի ընկալումը և զգացողությունը, ստեղծագործական մոտեցումը և քննադատական մտածողությունը: Արվեստն դպրոցականների արտահայտվելու յուրահատուկ ձև է, որը համարվում է նաև գեղագիական դաստիարակության կարևոր խթան: Գեղագիտական դաստիարակությունը նպաստում է կրտսեր դպրոցականների հուզական ոլորտի զարգացմանը և զգայական փորձի հարստացմանը, այն թույլ է տալիս բացահայտել երեխայի ստեղծագործական ունակությունները և ձևավորում անձնային կարևոր հատկություններ: Ամենօրյա շփումը գեղեցիկի հետ նպաստում է երեխայի գեղեցիկի ընկալմանը, ստեղծմանը և ի վերջո գեղեցիկ միջավայրում ապրելու պահանջմունքի զարգացմանը: Որքան խորն է գեղագիտական ընկալումը, այնքան ամուր է մարդ-արվեստ, մարդ-բնություն կապը:

Տարրական դպրոցում համակողմանիորեն զարգացած անձի ձևավորման համար լուրջ դերակատարում է վեհապահված «Տեխնոլոգիա» առարկային: «Տեխնոլոգիա» առարկան միայն գեղագիտական դաստիարակության միջոց չէ, այն երեխայի բազմակողմանի զարգացման հիմքն է, գեղագիտական, բարոյական,

[30] Բորև Յու., Գեղագիտություն, «Հայաստան» հրատարակչություն, Երևան 1982, էջ 492:

ֆիզիկական և աշխատանքային դաստիարակության գործուն միջոց:

Տարրական դպրոցում, հատկապես առաջին դասարանում, պրակտիկ առարկայական գործունեությունը հնարավորություն է տալիս երեխային նախապատրաստել հետագա աշխատանքին, տարբեր նյութերի հետ աշխատելու ձևերին, դաստիարակել նյութի յուրօրինակ զգացողություն, քանի որ առանց դրա անհնար է ազատ, գեղարվեստական-ստեղծագործական գործունեություն:

Գեղարվեստական կրթության ձևավորման գործում մեծ դեր և նշանակություն ունի տարրական դասարաններում «Հրաշք տետր»-ի կիրառումը: Այն հանդես է գալիս որպես երեխայի գեղարվեստական կրթության ձևավորման միջոցներից մեկը: Երեխան աշխատելով տետրում, դեռևս առաջին դասարանից, գեղարվեստական պատկերացումներ է կազմում, ինչն էլ դառնում է նրա գեղարվեստական կրթության ձևավորման կարևորագույն նախադրյալներից մեկը: Նա սկսում է ինքնուրույն ձևավորել և որոշել, թե ինչն է գեղեցիկ և ինչն՝ ոչ: Կարելի է ասել, որ «Հրաշք տետր»-ի օգտագործումը նպաստում է ինչպես տեսական նյութի լավ յուրացմանն, այնպես էլ գեղեցիկի ճիշտ ընկալմանը: Տետրում գրված նյութը և նկարներն ավելի պատկերավոր են դարձնում դասը և երեխաների մոտ առաջացնում են վառ հիշողություններ կապված դասի հետ: Նրանք այդ ամենը կարող են շատ երկար հիշել:

Գեղարվեստական կրթության մեթոդների ընտրությունը մեծապես կախված է նաև երեխաների տարիքից: Փոքրիկներին գեղեցիկի, լավի, բարու մասին զաղափար տալիս նպատակահարմար է նրանց ուշադրությունը հրավիրել այն բանին, թե որքան լավ է, երբ սենյակը մաքուր է, հավաք, կոկիկ, կարելի է վերլուծել նաև հեքիաթների հերոսների բարի արարքներն ու բացահայտել դրանց հետևանքները: Ավելի ուշ երեխաների առջև դրվող խնդիրները փոքր-ինչ բարդացվում են, օրինակ՝ մեծահասակների օգնությամբ ակտիվորեն «վերափոխել» շրջակա աշխարհը: Այսինքն՝ նրանք բացի դիտումից ու արժևորումից, պետք է կարողանան նաև ձևավորել խաղերի անկյունը, շինվածքներ պատրաստել և այլն: Այս ամենի միջոցով երեխաները գործնականորեն կիրառում են դիտունակություն ձևավորելու, ինքնուրույն գործելու, իրենց քայլերը պլանավորելու, սեփական մտահաղացումն իրականացնելու և շատ այլ մեթոդներ: Երեխաների աճի, զարգացման, տարիքային

պահանջմունքներով ու ձգտումներով պայմաավորված՝ բարդանում են նաև գեղարվեստական դաստիարակության մեթոդները:[31]

Գեղարվեստական կրթության մեթոդները դժվար է ճշգրտորեն դասակարգել, քանի որ դրանց բաղադրիչները միշտ սերտ փոխներգործության մեջ են գտնվում միմյանց հետ: Օրինակ, երեխաների հետ դիտելով որևէ կտավ կամ արվեստի ստեղծագործություն՝ ուսուցիչն օգտագործում է դիտման մեթոդը, իսկ դիտումը ուղեկցվում է բացատրություններով, մեկնաբանություններով, հարցեր են ուղղվում երեխաներին, ապա այդ դեպքում օգտագործվում է նաև խոսքային մեթոդը:

Մանկավարժագիտությունն ու պրակտիկան մշակել են մի շարք մեթոդներ, որոնք նպաստում են երեխաների գեղագիտական զգացմունքների, վերաբերմունքի, գնահատանքի, գործնական կարողությունների ձևավորմանը: Դրանցից են՝

- Համոզման մեթոդը,
- Խնդրահարույց իրավիճակների մեթոդը, որը մղում է ստեղծագործական և գործնական քայլերի,
- Կարեկցանքի, լավի, գեղեցիկի նկատմամբ դրականորեն. Իսկ շրջապատում հանդիպող տհաճ երևույթների նկատմամբ բացասականորեն արձագանքելու մեթոդը:

Գեղարվեստական կրթության մեթոդների ընտրությունն ուսուցման մեջ կախված է նրանից, թե ինչպիսի որակներ, ինչպիսի ունակություններ է ցանկանում զարգացնել երեխայի մեջ ուսուցիչը: Մի դեպքում անհրաժեշտ է զարգացնել նախաձեռնություն ու ինքնուրույնություն, որոնք անհրաժեշտ են ցանկացած գործողություն կատարելիս, մյուս դեպքում երաժշտական, կերպարվեստային՝ գործունեության հետ կապված հատուկ ունակություններ: Ներկայումս լայնորեն կիրառվում են երեխաների ստեղծագործական մտածողությունը, երևակայությունը զարգացնող մեթոդներ: Օրինակ՝ ուսուցիչը կարդում է տեքստից ինչ-որ հատված, իսկ երեխաները պետք է հորինեն ավարտը կամ ուղղակի շարունակեն միտքը: Մյուս դեպքում՝ ստեղծագործությունը վերարտադրելիս պետք է պատմեն որպես մասնակից, հեղինակ կամ ուղղակի դիտորդ: Նմանատիպ վարժությունները զարգացնում են

[31] Неменский Б.П., Роль искусстве в системе общего образования: Чему и зачем мы учим, М.,"Начальная школа", 2000, ст.22:

երեխաների ստեղծագործական միտքը, երևակայությունը, պատկերացումները:

Երեխաների գեղարվեստական կրթության մեջ մեծ նշանակություն ունի նրանց կատարած ինքնուրույն աշխատանքը: Ուսուցիչը պետք է պայմաններ ստեղծի, որ երեխաներն ինքնուրույն արտահայտվեն ստեղծագործության բովանդակության, նրա բնույթի, արտահայտչամիջոցների վերաբերյալ, գնահատեն թե իր, թե խմբի մյուս անդամների կատարած աշխատանքները, անցկացնեն զանազան համադրություններ ևև համեմատություններ: Եթե երեխաները տրված աշխատանքը կատարում են ինքնուրույն, առանց ուսուցչի օգնության, օրինակ՝ երգում են առանց դաշնամուրի նվագակցության, նկարում են սեփական մտահաղացումներով, ապա ուսուցիչը կարող է նաև երեխաներին որոշ բաներ հուշել, և այդ ժամանակ երեխան կկարողանա տեսնել իր թերություններն ու շտկել դրանք:

Մեթոդներն ու ձևերն ընտրելիս մեծ ուշադրություն պետք է դարձնել երեխաների տարիքային և անհատական առանձնահատկություններին, հաշվի առնել թե կոլեկտիվի, թե յուրաքանչյուր երեխայի հնարավորությունները: Երեխաների մոտ վաղ են դրսևորվում երգելու, պարելու, նկարելու, ծեփակերտելու ունակությունները: Ուսումնասիրելով նրանց հակումները՝ պետք է մշակել այնպիսի մեթոդներ, որ հաշվի առնվեն տարբեր առաջադրանքների կատարման դժվարությունները:

Առաջին դասարանի երեխաների հետ աշխատելիս կիրառվում են խաղային մեթոդներ: Երբ ուսուցիչը գեղարվեստական նյութը ներկայացնելիս խաղային իրավիճակ է ստեղծում, երեխաներն ավելի լավ են հասկանում մատուցվող նյութը:

Գեղարվեստական կրթության մեթոդները, միջոցները հնարավորություն են ընձեռում ուսուցիչների՝ երեխաներին օգնել նկատելու շրջապատող աշխարհի երևույթների, առարկաների, գործընթացների գեղեցկությունները, զարգացնել գեղագիտական ընդունակությունները, ձևավորել և զարգացնել գեղեցիկի զգացողություն: Այս առիթով Դ.Բ.Կաբալևսկին ասում է. «Գեղեցիկը բարություն է ծնում»: Ամենօրյա շփումը գեղեցիկի հետ նպաստում է երեխայի կողմից գեղեցիկի ընկալմանը, ստեղծմանը և ի վերջո՝ գեղեցիկ միջավայրում ապրելու ցանկությանը, պահանջմունքի զարգացմանը: Բարեկիրթ միջավայրը երեխայի գեղարվեստական կրթության հիմնական պայմանն ու միջոցն է:[32]

[32] Խաչատրյան Ն., Գեղարվեստական կրթության նպատակը, ուղիներն ու միջոցները հանրակրթական

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր կողմից կատարված տեսական ուսումնասիրությունների և սոցիոլոգիական հարցումների վերլուծության արդյունքում հանգեցինք հետևյալ եզրակացության.

- Ուսումնասիրել ենք «Հրաշք տետր»-ի կիրառման նշանակությունը գեղարվեստական կրթության ձևավորման գործում: Դասվարների կեսից ավելին կարևորություն են տալիս տետրի կիրառմանը և մեծ ուշադրությամբ հետևում են աշակերտների կողմից կատարված աշխատանքներին:
- Դաստիարակությունը մանկավարժության շատ դժվարին բնագավառներից մեկն է, որի վերջնական նպատակն է հասարակությանը պիտանի և օգտակար անձի ձևավորումը: Դաստիարակության բաղադրատարրերի փոխկապակցվածությունը տարրական դասարաններում, իր մեջ ներառում է դաստիարակության յուրաքանչյուր բաղադրատարրերի խնդիրները, նպատակները ինչպես նաև իրականացման ուղիները: Այն նպաստում է աճող սերնդի համակողմանի ու ներդաշնակ զարգացման հիմնախնդրի լուծմանը:
- Կրտսեր դպրոցական տարիքի երեխաներն ունեն գեղարվեստա-գեղագիտական զարգացման մեծ հնարավորություններ: Այդ գործունեության ճիշտ կազմակերպումը նպաստում է գեղարվեստական ընդունակությունների զարգացմանը: Այս ամենը նախադրյալ է ավելի մեծ տարիքում երաժշտական, գրական ընդունակությունների, նկարչական ընդունակության զարգացման համար:
- Կրտսեր դպրոցականների գեղարվեստական կրթության ձևավորումը տարրական դպրոցում առաջնային է համարվում, քանի որ կրտսեր դպրոցական տարիքում է դրվում գեղագիտական դաստիարակության հիմքը և ձևավորվում գեղարվեստական կարողությունները:
- Գեղարվեստական կրթության միջոցները բազմազան են և դրանք կախված են մի շարք գործոններից, անհրաժեշտ է հաշվի առնել կրտսեր դպրոցականների գեղարվեստական կարողությունները ձևավորելիս նրանց անհատական և

դպրոցում, <<Մխիթար Գոշ>>, Գիտամեթոդական հանդես, 4-6.2012, էջ 24:

տարիքային առանձնահատկությունները, գեղարվեստական կրթության առանձնահատկությունները տարրական դպրոցում և իրականացման մեթոդները:

- Կատարած վերլուծությունները ցույց տվեցին, որ տարրական դասարաններում գեղարվեստական կրթության ձևավորումն դասվարներն կազմակերպում են «Տեխնոլոգիա» և «Կերպարվեստ» առարկաների, միջոցառումների, էքսկուրսիաների, գեղեցիկ ձևավորված դասարանների, հեքիաթների, ֆիլմերի, մուլտֆիլմերի, երաժշտության ունկնդրման, ինչպես նաև պաստառների ձևավորման և «Հրաշք տետր»-ի կիրառման մեթոդներով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աթայան Ռ.,Աշակերտների գեղագիտական դաստիարակությունը, Երևան, 1974:
2. Աղայան Ղ., Խորհրդածություն դաստիարակության վերաբերյալ, «Հայ մանկավարժներ», հ.1, Երևան, 1958, էջ 352:
3. Ամիրջանյան Յ.Ա., Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն, Երևան, 2005:
4. Բորև Յու., Գեղագիտություն, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1982:
5. Թեմուրյան Ա., Ղալաչյան Ժ., Ժամանակակից դեռահասի բարոյական արժեքների ձևավորումը, «ՄխիթարԳոշ», Գիտամեթոդական հանդես, 2.2020, էջ 197-205:
6. Խաչատրյան Ն., Գեղարվեստական կրթության նպատակը, ուղիներն ու միջոցները հանրակրթական դպրոցում, «Մխիթար Գոշ», Գիտամեթոդական հանդես, 4-6.2012, էջ 22-24:
7. Կովայլով Ն.Ե., Մանկավարժության ներածություն, Երևան, 1977:
8. Հարությունյան Ա., Գեղարվեստական դաստիարակության հիմնախնդրի պատմական զարգացման փուլերը, «Մանկավարժություն», ամսագիր, 2.2017, էջ 28-35:
9. Ներսիսյան Լ.Ս., Գեղարվեստական կրթությունը գեղագիտական դաստիարակության սոցիալական հիմք, Գեղարվեստական հիմք, Երևան, 2005, էջ 3-12:
10. Պապիկյան Կարինե, Գեղարվեստական կրթությունը որպես գեղագիտական դաստիարակության բաղադատարր, «Մխիթար Գոշ», Գիտամեթոդական հանդես, 4-6.2012, էջ 19-21:
11. Քոչարյան Լ., Գեղագիտական դաստիարակության խնդիրները, Ընտանիք և դպրոց, գիտամեթոդական ամսագիր, 1.2010, էջ 11-17:
12. Ананьев Б.Г., Избранные психологические труды, в 2-х т.2, “Педагогика”, 1980:
13. Подласый И. П., Педагогика, теория и технологии воспитания, Москва 2007:
14. Неменский Б.П., Роль искусств в системе общего образования: Чему и зачем мы учим, М.,’’Начальная школа’’, 2000:

15. Неменский Б.М., Мудрость красоты, М., “Просвещение”, 1981, с.28:
16. Рахимбаева И. Э., Художественное образование в современном мире и перспективы его развития // Современные проблемы науки и образования. – 2018. – № 4:
17. Сергеева Б.В., Петренко Н.А. Эстетическое воспитание младших школьников // Современные наукоемкие технологии. – 2016. – № 12-2. – С. 428-432:
18. Любимова,Ю.С. Эстетическое воспитание и художественное образование младших школьников / Ю.С.Любимова // Пачатковаяшкола.–2007.–No1.–С.38–40:

Հավելված



ԵԼԿՐԵԿԸ ՏԻԵԶԵՐԱԿՈՒՄ
1

10

10.